ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ 2021-2022 ՈՒՍ.ՏԱՐՎԱ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021-2022 ուսումնական տարում համալսարանի ուսումնական մասը իր գործունեությունն իրականացրել է համաձայն իր աշխատանքային պլանի:

Ուումնական մասի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է.

- Նոր ուսումնական տարվան ընդառաջ իրականացվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես՝ ժամանակին ամփոփվել և պատրաստվել են ուսանողների ըստ կուրսերի և խմբերի ցուցակները, ուսումնական մատյանները, ամբիոնների դասաբաշխումը, ուսումնական աշխատանքների ծավալը, օրացույցային-թեմատիկ պլանները, խորհրդատվությունների մատյանները, դասալսումների ժամանակացույց և այլ ձևաթղթեր:
- 2021-2022 ուս.տարում կազմվել և ժամանակին պատրաստվել են երկու ֆակուլտետ-ների 2021-2022 ուստարվա ուսումնական օրացույցները, դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննությունների, լուծարքների և աշնանային կիսամյակի պրակտիկայի ժամանակացույցները:
- 2021-2022 ուս.տարում 2 վարձակալման պայմանագրեր են կնքվել «Արմենիա» ԲԿ-ի և «Թիվ 2 բուժ.միավորում»-ի, «Բեսթ Լայֆ» ԲԿ-ի հետ: Ունեցել ենք նոր դասախոսներ:
- Ռեկտորի հանձնարարականով կլինիկական աշխատանքների և պրակտիկայի պատասխանատուի հետ միասին վարձակալաց կլինիկական բազաներում իրականացվել է նախապատրաստական աշխատանքներ ուսանողներին պատշաճ մակարդակով ընդունելու նպատակով:
- Հաշվետու ուստարվա ընթացքում ‹‹ԱԲՀ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման›, ‹‹ԱԲՀ օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգման›, ‹‹ԱԲՀ սովորողների շարժունության›, «ԱԲՀ ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման» վերանայված կարգերը ամբողջովին գործարկվել են: Նախատեսվում է 2023-2024 ուստարվա ընթացքում իրականացնել վերոնշյալ կարգերի մշտադիտարկում և արդյունավետության գնահատում ՈԱ բաժնի կողմից:
- 2021-2022 ուս.տարում համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ուղարկված գրությունների, հիմք ընդունելով «ԱԲՀ-ի օտարերկրյա դիմորդների հեռավար եղանակով գիտելիքների ստուգման կազմակերպման կարգ»-ը համալսարանում ZOOM հարթակով

կազմակերպվել է 1-ին կուրս ընդունվող օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգում Անգլերեն և Կենսաբանություն առարկաներից:

Դիմորդները եղել են հետևյալ երկրներից՝ Հնդկաստան, Մեծ Բրիտանիա, Իրան, Հորդանան, Շվեդիա, Շրի Լանկա, Ֆիլիպիններ, Իրաք, Իռլանդիա, Եգիպտոս:

Ընդհանուր ընդունվել են 97 ուսանող, որից 83-ը բուժական ֆակուլտետ, իսկ 14-ը՝ ստոմատոլոգիական: Ընդունելությունն աճը նախորդ տարվան համեմատ կազմել է 13 տոկոս:

- Կիսամյակների սկզբում ճշտվել են բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը, ըստ որի ունեցել ենք 22 խումբ, բոլորը օտարազգիների՝

  Բուժական ֆակուլտետ

  - ✓ I , II , III, IV, V կուրսեր՝ անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով 17 խումբ:

  Ստոմատոլոգիական ֆակուլտետ

  - ✓ I , II, III , IV, V կուրսեր՝ անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով սովորողներ 5 խումբ:

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ՀՀ ԿԳՄՍ նախարարի Սուրբ Թերեզա բժշկական համալսարանի լիցենզիայի կասեցման պատճառով ԱԲՀ-ն են տեղափոխվել 133 ուսանող, որից 40 հայ ստոմատոլոգիա և 93 օտարազգի բուժական գործ մասնագիտություններով: Ավելացել է 5 խումբ բուժական ֆակուլտետում, 2 խումբ ստոմատոլոգիկան ֆակուլտետում;

Ցածր առաջադիմության և վատ հաճախումների պատճառով համալսարանից հեռացվել են 15 ուսանող, ազատվել են ուսանողական իրավունքներից համաձայն իրենց դիմումի 17 ուսանող:

2021-2022 ուսումնական տարում համալսարանն ունեցել է 162 ուսանողի ներհոսք՝ 111 ուսանող բուժական ֆակուլտետ, 51 ստոմատոլոգիական:

- Հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի խորհրդատուի, դեկանի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին բոլոր կուրսերում անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը, կազմակերպչական այլ հարցեր:
- Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ կազմնակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների տպագրման աշխատանքները և

շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Հաշվետու տարում բուհն ավարտել են՝

- ✓ «Ստոմատոլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով 14 շրջանավարտ:
- ✓ «Բուժական գործ» մասնագիտության անընդհատ և ինտեգիացված կրթական ծրագրով 64 շրջանավարտ:

Բացարձակ գերազանցությամբ բուհն ավարտել է «Ստոմատոլոգիա» մասնագիտության 1 շրջանավարտ: Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

- ➢ Երկու կիսամյակների ընթացքում ուսանողները հանձնել են 258 ստուգարք և 171 քննություն:

Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմում 80,85%, իսկ որակական առաջադիմությունը՝ 58,9 %: Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Վիրաբուժական առարկաների 2» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնում: Որակական առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Վիրաբուժական առարկաների 1» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնում:

Աղյուսակ 1

N	Ամբիոն	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
1	Հումանիտար առարկաների	87,2	54	90,6	52,25	91,9	59,7
2	Բնագիտական առարկաների	75,2	34,5	75,63	43,46	75,42	39,1
3	Բժշկակենսաբանական առարկաների	66,6	44,5	62,8	37,3	65,8	41,6
4	Սոցիալական բժշկության	95,25	75,7	97,7	86,7	96,5	81,1
5	Թերապևտիկ առարկաների	20,5	12,84	32,56	18,64	26,53	15,74
6	Վիրաբուժական առարկաների 1	97,65	91,4	98,15	86,2	97,67	89
7	Վիրաբուժական առարկաների 2	100	86	98,2	77	99,5	81,73
8	Ստոմատոլոգիայի	91,91	62,53	93,7	63,2	93,5	63,2
9.	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	97,2	66,98	99,6	80,85	99,05	69,3
ԸՆԴԱՄԵՆԸ		***88,25***	***62,33***	***90,4***	***69,47***	***89,95***	***64,1***

Կարգավորվել և վերահսկվել են համալսարանական ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

Հաշվետու տարում կազմակերպվել և անցկացվել են՝ COVID 19 համավարակի հետ կապված 2019-2020, 2020-2021 ուս.տարիներում բաց թողնված պրակտիկաները, որոնք անկացվել են «Շենգավիթ», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Բեսթ Լայֆ» , «Արմենիա» բժշկական կենտրոներում -ում:

Նաև անցկացվել են հերթական ամառային ուսումնաարտադրական պրակտիկաները ԱԲՀ ԳԲՈՒԿ-ում, «Արթմեդ» ԲՎԿ-ում, «Քանաքեռ Զեյթուն», «Բեսթ Լայֆ», «Շենգավիթ», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Արմենիա» բժշկական կենտրոներում, «Շտապ օգնություն» ՓԲԸ-ում:

2021-2022 ուսումնական տարում բոլոր 8 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է տարվա սկզբին 20262 ժամ, հետո ավելացել է 1 կուրսի 5120 ժամը, իսկ գարնանային կիսամյակում ավելացել է 3740 ժամ:

Կազմակերպել և ստուգվել են 2021-2022 ուստարվա համալսարանի 8 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները՝

Ուսումնական ծանրաբեռնվածությունների կատարողականի ցուցանիշները

Հ/հ	Ամբիոն	Պլան	Կատարողական	Շեղում
1.	Հումանիտար առարկաների	1943	1745	-198
2.	Բնագիտական առարկաների	2440	2343	-97
3.	Բժշկակենսաբանական առարկաների	5732	5503	-229
4.	Թերապևտիկ առարկաների	4296	3519	-777
5.	Վիրաբուժական առարկաների 1	1717	1905	+188
6.	Վիրաբուժական առարկաների 2	1933	2213	+280
7.	Սոցիալական բժշկության	2379	2575	-196
8.	Ստոմատոլոգիայի	709	947	+238
9.	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	2091	936	-1155
Ընդամենը		**23240**	21686	**-1554**

2021-2022 ուսումնական տարում 8 ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունը ըստ պլանի կազմել է 23240, բայց կատարվել է 21686 ժամ: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել 1554 ժամ բեռնվածություն:

Պարզ երևում է նաև, որ առավել մեծ է եղել ուսումնական ծանրաբեռնվածությունը Թերապևտիկ առարկաների (4296 ժամ) և Բժշկակենսաբանական առարկաների (5732 ժամ) ամբիոններում:

Ըստ ուսումնական պլանի նախատեսված դասախոսների ծանրաբեռնվածության ժամաքանակի շեղումները պայմանավորված են հետևյալ պատճառներով.

- տոնական և ոչ աշխատանքային օրերի առկայություն,
- խորհրդատվություններին հատկացված ոչ բոլոր ժամերի կատարում,
- գարնանային կիսամյակում ժամերի ավելացման
- անցումային պլանների կազմման

Կատարվել է մասնակցություն ամբիոնների նիստերում, ռեկտորատի, գիտ. խորհրդի նիստերին, դասալսումներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խմբերի ավելացման պատճառով կլինիկական առարկաների գործնական պարապմունքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է հնարավորության դեպքում ավելացնել կլինիկաները:
- Համալրել ամբիոնները գիտական աստիճան ունեցող մասնագետներով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԱՐԻՉ՝ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼ

Հ/հ	Ամբիոն	**31.08**	**13.11**	**31.01**	**05.04**
1.	Հումանիտար առարկաների	322	1872	-	60
2.	Բնագիտական առարկաների	1680	1222	695	
3.	Բժշկակենսաբանական առարկաների	4765	1876	550	260
4.	Թերապևտիկ առարկաների	3240	-		750
5.	Վիրաբուժական առարկաների	2760	-	685	510
6.	Վիրաբուժական առարկաների 2		-	519	390
7.	Սոցիալական բժշկության	1680	150	1410	1170
8.	Ստոմատոլոգիայի	3600	-	805	420
9.	Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության	2215	-	147	180
Ընդամենը		**20262**	**5120**		

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է բաժնում